ՀՏԴ 82-145
Գրականագիտություն

Գայանե ԼԱԼԱՅԱՆ
ԱրՊՀ, գրականության և լրագրության ամբիոն, ավագ դասախոս

ԳՈՒՐԳԵՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԸ ԵՎ ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Հոդվածում ներկայացված է տաղանդավոր գրող Գ. Գաբրիելյանի հայրենիրգությունը: Իրեն վիճակված բարդ ու հակասական կեղծիքի ժամանակաշրջանում նա պահպանեց իր ազգային նկարագիրն ու ճիշտ կողմնորոշվելու հմտությունը: Գրողն ասես նույնանում էր հայրենիքին և իր ցավը գիտակցում Հայրենիքի գաղափարով: Վառ արտահայտված անհատականություն էր ոչ միայն գրական ասպարեզում, այլև մարդկային դրսևորումներով. միշտ խմորվող կրքերի կենտրոնում՝զորավիգ ժողովրդի թիկունքին: Սակայն պատմության մեջ մնաց ոչ թե կոչերով, այլ մնայուն գեղարվեստական արժեքներով, քանզի նրա ստեղծագործություններում ժամանակի կենսագրությունն է ամփոփված:

Բանալի բառեր՝ *շարժում, անկախություն, լավատեսություն, երաժշտություն, Հայրենիք, հավատ, հերոսություն, հայրենասիրություն:*

Г. Лалаян

ГУРГЕН ГАБРИЕЛЯН И АРЦАХСКОЕ ДВИЖЕНИЕ

В статье анализируется патриотизм талантливого поета Гургена Габриеляна. Его поэзия отличающяеся художевенным своеобразием, выразительностью и эмоциальным воздействием восхищают не толко детей, но и взрослых. Его произведения характеризуются стилистическим разнообразием и отточенной системой образов. Воспитание патриотизма-вот основное направление художественного мира, которым поэт руководствовался в течении всей своей творческой жизни.

Ключевые слова: *движение, незажисимость, оптимизм, мелодия, отчизна, вера, героизм, потриотизм.*

G. Lalayan

GURGEN GABRIELYAN AND ARTSAKH LIBERATION STRUGGLE

The article analyses patriotic luricism of a falented children's poet Gurgen Gabrielyan . His poems ,due tu their artistic originality, expressiveness and emotive impact enrampture not only children, ut also adults. Stylitic diversity and sharpened image system are the main characteristics of his works. Patriotizm cultivation of childish souls is the main tendency of the artistic worid, which the poet followed all his creative life.

Key words *– motion, independence, optimism, melody, homeland, faith, heroism, patriotism.*

Յուրաքանչյուր երկիր, յուրաքանչյուր ազգ ունի իր նվիրական հենարանը: Երբ ժողովրդի պատմությունը երջանիկ է դասավորվում, այն դառնում է մշակութային ու քաղաքական կյանքի կենտրոն: Երբ ճակատագիրը հալածում է ազգին, այն լինում է ազգային կյանքի պատվարը, հույսերի կղզին, վերածննդի գրավականը: Հայաստանի համար հենց այդ վերջին դերն էլ խաղացել ու խաղում է Ղարաբաղ լեռնային մարզը:
Ս. Գորոդեցկի

Տաղանդավոր արձակագիր, Արցախյան շարժման ջատագով Կոմիտաս Դանիելյանը, շարժումը համեմատելով Ավարայրի ու Սարդարապատի հետ, նշում է, որ այն համայն հայության հավաքական ուժի հավաստումն է, որով և հիմք դրվեց մեր ժողովրդի ազգային զարթոնքին: Այս երեք հերոսամարտերը համարելով մեր ազատաբաղձ ժողովրդի աստեղային ժամերը՝ նշում է, որ սերտորեն շաղկապված լինելով միմյանց հետ՝ հանդիսանում են մեկը մյուսի շարունակությունը. չլիներ Ավարայրը, չէր լինի և Սարդարապատը, չլիներ Սարդարապատը, հազիվ թե լիներ Արցախյան շարժումը:

70 տարիների թուրքական մռայլ համապատկերում սուտ գաղափարախոսությամբ կասեցվեց Արցախի գրական-մշակութային զարգացումը: Դեռևս 1948-ին Ավ. Իսահակյանը շրջագայում էր Արցախում. հրաշքի փոխարեն Ղարաբաղն էր՝ անփառունակ տեսքով ու բեկված հույսերով, կտրված Հայաստանից՝ ոչ թերթ, ոչ գիրք, և Վարպետը ցավով օրագրում է, որ խեղճ ղարաբաղցիք կարծում են, թե իրենք են ապրում թուրք պատմական հողերի վրա, ոչ թե հակառակը:

Բզկտված մեր մայր
Հող ու հայրենին,
Այլոց բարբառին
Խառնած մայրենին[1]:

60-ականների կեսերին, երբ « դեմքով դեպի Հայաստան քնելը բավարար հիմք էր ազգայնամոլության մեջ մեղադրվելու համար», մի խումբ մտավորականներ իրենց ստորագրությունն են դնում Բ. Ուլուբաբյանի կազմած հայտնի նամակի տակ. թվում էր, թե ուր որ է Արցախը կփրկվի թուրք – ազերիների բռնապետությունից: Եվ պատմության բոլոր ելևէջներում հնչող «միացում» կոչն ու կանչը կդառնա երջանիկ իրողություն, սակայն, ինչպես գրող Բ. Ջանյանն է նշում. «հույսերից

[1] ***Գաբրիելյան Գ.,*** *Ընտրանի, Ստեփանակերտ, 2007, էջ 200:*

պայծառացած արցախյան մթնոլորտը մթագնեց, դարձավ աղետավոր, ինքը շարժումը մեծ աղետ դարձավ առաջին հերթին շարժման ակտիվ մասնակիցների համար: Նրանց մեկուսացրին, կալամեջ արին այն ժամանակվա Արցախի դրածո տերերը, իսկ ժողովուրդը… Ժողովուրդը ինչ, դեռ կարգին չէր արթնացել խաբեության քնից»[1]:

Դիմում-նամակը վերագրվեց որպես Խորհրդային կարգերը խարխլելու դավադիր նպատակ, 13 նվիրյալները մեղադրվեցին դաշնակցական ահաբեկչական գործունեության մեջ, որոնց թվում և Գուրգեն Գաբրիելյանը, որը նույնպես զերծ չմնաց ազերիների հալածական քաղաքականությունից և իր ազատատենչ հայացքների պատճառով հեռացվեց աշխատանքից և մյուս մտավորականների հետ ստիպված լքեց Արցախը… «Արցախում մնալն անհնարին դարձավ հատկապես այն պատճառով, որ Բաքվի իշխանություններն իրենց հայատյաց ծրագրերի իրականացման գործընթացի մեջ ներգրավել էին մի խումբ ստրկամիտ հայ պաշտոնյաների՝ Մելքումյանների, Կևորկովների և ուրիշների, որոնք իրենց գործողություններով ամեն կերպ աշխատում էին հաճոյանալ թուրքերին»[2],- հայտնի դեպքերի մասին գրում է ՀՀԳԱԱ ակադեմիկոս Հր.Սիմոնյանը:

Սակայն Հայրենիքի պատկերով կարոտ կոչված հոգու մելամաղձը չէր լքում Գ.Գաբրիելյանին. գրողն աստվածային սիրով էր օժտված դեպի Արցախը և նույնքան խոր ցավ էր տածում նրա ճակատագրի նկատմամբ. Հայոց Արևելից 10-րդ նահանգն ամբողջությամբ ձուլված էր բանաստեղծի էությանը: «Շատ եմ սիրում Երևանը, շատ եմ սիրում Հայաստանի մնացած բոլոր վայրերը, բայց Ղարաբաղից դուրս կյանք չունեմ, իմ օդը, իմ ջուրը, իմ հողը, իմ գոյության բոլոր կենսապայմանները՝ և հոգեկան, մարմնական, կապված են Ղարաբաղի հետ.

Դու ինչ ուժ ու
Հունար ունես,
Ինչ երգ ու ինչ
Քնար ունես,
Որ երբ քեզնից
Մի քիչ զատվում
Քո կարոտից
Չեմ ազատվում»[3]:

Իրեն վիճակված բարդ ու հակասական կեղծիքի ժամանակաշրջանում նա պահպանեց իր ազգային նկարագիրն ու ճիշտ կողմնորոշվելու

---

[1] ***Ջանյան Բ.,*** *Հայաստան, 1995, 9 դեկտեմբեր:*
[2] ***Սիմոնյան Հր.,*** *Լրաբեր հասարակական գիտությունների, 2001, թիվ 1:*
[3] ***Գաբրիելյան Գ.,*** *Աշնան հանդես, Երևան, 1999, էջ 68:*

հմտությունը և ինչպես գրող, գրականագետ Վ. Հակոբյանն է նշում՝ պատիվ ունեցավ երկու անգամ իր ստորագրությունը դնելու Արցախը մայր Հայաստանին միացնելու նամակի տակ. «Գուրգեն Գաբրիելյանն իր ժողովրդի, ազգի նվիրյալն էր: Եվ գիշեր – ցերեկ մաքառում էր հանուն Արցախը հայ պահելու, հանուն մեր լեզվի անաղարտության, հանուն մեր հավատի: Երկու անգամ նա արձակագիր Մաքսիմ Հովհաննիսյանի հետ միասին, ստորագրել է Արցախը մայր Հայաստանին միացնելու նամակի տակ, ենթարվել հալածանքների: Բայց հանուն իր ժողովրդի, պատրաստ էր ամեն տեսակ չարչարանքների, միայն թե մեր ազգային նպատակն իրականանա»[1]:

Վառ արտահայտված անհատականություն էր ոչ միայն գրական ասպարեզում, այլև մարդկային դրսևորումներով. միշտ խմորվող կրքերի կենտրոնում՝զորավիգ ժողովրդի թիկունքին, սակայն պատմության մեջ մնաց ոչ թե կոչերով, այլ մնայուն գեղարվեստական արժեքներով, քանզի նրա ստեղծագործություններում ժամանակի կենսագրությունն է ամփոփված. «Բանաստեղծը հոգու բոլոր թելերով կապված է ժամանակի հետ, ապրում է ձեռքը միշտ դարի զարկերակին, մարդկանց հոգսերով ու խնդություններով, նրանց ստեղծագործական նվաճումներով»[2]:

Երգ հորինելու, երգիչ դառնալու շարժառիթներից մեկն էլ գրողը համարում է 60-ականների արցախյան շարժումը.«1965-68 թվականներին էր, երբ իմ մի խումբ գրչեղբայրների ու հայրենակից հերոս այրերի հետ /Բ. Ուլուբաբյան, Բ. Ջանյան, Ար. Մանուչարով, Գ. Ստեփանյան, Ս. Շաքարյան և ուրիշներ / բորբոքեցինք Ղարաբաղը մայր հայրենիքին միացնելու գաղափարը: Պետք էր տեսնել, թե ինչ ոգևորությամբ ու հույսերով էինք խանդավառված: Օդը, շրջապատը ներծծված էր մայր հայրենիքին միանալու բաղձանք – երազանքով: Այն մի տեսակ այլևս անհեռանկար պատրանք չէր, թեև մերթ առարկայական, և մերթ էլ երազային տեսիլներով էր պատկերանում: Եվ հենց այսպես անորոշ էլ այն մուտք գործեց պոեզիայի, երգ – երաժշտության մեջ: Եվ հենց այսպես էլ ծնվեցին և լույս աշխարհ եկան Ղարաբաղյան շարքի իմ երգերը.

Մատաղ ինի ծեզ աքան, դե հա, պըրծեք, թոռ կկյա,
Մարդ ա եկալ քղաքան, ասըմ ա՝ լյավ օր կկյա[3]:

Անհնար է պատկերացնել գրողի հայրենասիրությունը առանց նրա կենսագրական փաստերի , քանզի նրա կենսագրության մեջ բեկված է ազգի ճակատագիրը. մեծ քույրն ամուսնացել էր 17 տարեկանում և բնակվում էր Բաքվում: 15 թվականի եղեռնը հասնում է և այնտեղ. քույրն ու փեսան դառնում են թուրքական խուժանի զոհը: Լուրեր էին պտտվում, որ ամուսնուն սպանել են, իսկ քրոջն առևանգել. «Մայրս երբ սուգ էր ասում,

---

[1] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում****, Ե., 2007 էջ 42*

[2] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում****, 2007 էջ 40:*

[3] ***Գաբրիելյան Գ.,*** *Ղարաբաղի հորովել, Երևան, 2003 էջ 5:*

լացացնում էր բոլորիս,-ասում էր գրողը: Շատ ժամանակ Գուրգենի երգն էլ սուգ էր: Անձնական ցավին գումարվեց ազգային- համամարդկային ցավն ու միաձուլվեցին պոետն ու երգահանը, որից էլ Գաբրիելյանի պոեզիան որոշակի հմայք ստացավ: Յուրաքանչյուր ստեղծագործության մեջ գրողն ապահովում է միջավայրին հարազատ կոլորիտը: Գրող Հ. Բեգլարյանի հավաստմամբ Գուրգեն Գաբրիելյանով Ղարաբաղում սկսվեց մի նոր շրջան: Դա երգի, երաժշտության, արվեստի, գրականության ծաղկման շրջանն է, երբ ազգային երգն ու մեղեդին եկան փոխարինելու հայկական մարած օջախներից լսվող մուղամներին:

Տաղնադավոր գրողի գրական – գեղարվեստական ժառանգությունը ծանրակշիռ արժեք է ներկայացնում ոչ միայն արցախյան գրականության մեջ: Ինչպես բանաստեղծ, գրականագետ Ս. Խանյանն է մատնանշում՝ «Նրա երգը, ծնված Արցախի հույսերից ու ցավերից, ակնկալություններից ու տագնապներից, հնչում է ամեն պահի՝ առնչված ժողովրդի ճակատագրի հետ»[1]:

Գրողն ասես նույնանում էր հայրենիքին և իր ցավը գիտակցում Հայրենիքի գաղափարով: Տագնապում էր Արցախի անորոշության համար և ինչպես բանաստեղծուհի Ժ. Բեգլարյանն է հավաստագրում, 1978թ. Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում հանդիպման ժամանակ իր ազատատենչ մտքերն առաջարկեց, ու երբ նրան զգուշացրին, որ կրակի հետ է խաղում, հպարտությամբ ասաց. «Ես կրակը կարող եմ գրկել»… և իր հետագա կյանքը հենց կրակի միջով անցավ: Իսկ 87-ին, երբ ՀԳՄ-ն նշվում էր բանաստեղծի 60 – ամյա հոբելյանը, այն վերածվեց Արցախի ազատագրական պայքարի միտինգի: Գրողի հայրեներգությանը խորթ են հոռետեսական տրամադրությունները: Լավատեսական շունչը զգացվում է անգամ տրտմությամբ շաղախված մեղեդիներում: Դառնալով մեր տանջված ազգի սուրբ մայրաքաղաք Դվինին , որի ավերակները գրողի համար ավելին արժեն, քան թե « բերդերը օտար ազգերի», թանգարանի մատյանում գրառում է.

Քեզ այցի եկա, որ ուժ հավաքեմ
Քո փշուրներից
Եւ գնամ նորից Արցախն իմ հզոր[2]:

Բանաստեղծ Ա. Հովհաննիսյանի հայտնի «Գանձասար» բանաստեղծության հետևյալ տողերին՝

Ավերակվող փուշը կողդ խրվել,
Խարխլում է պատդ լուռ, անծպտուն,

---

[1] ***Խանյան Ս.,*** *Գ. Գաբրիելյանի աշխարհը, Ե., էջ 61:*

[2] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում,*** *2007, Ե., էջ 201:*

Օ, Երկնային , ասա, ինչպես վարվեմ,
Ավաղ, ճաք է տվել սրբատունս...

ավելացնում է իրենը՝ Գաբրիելյանականը.

Արի կյանքով ծածկեմ ճեղքդ վերքոտ
Եվ արմատը հանեմ փուշ- կանաչիդ,
Թող որ նորից թնդա գմբեթը քո,
Զանգակատան զանգդ թող ղողանջի[1]:

Եվ երգը հնչեց ոչ թե որպես ցավի ու տառապանքի մրմունջ, այլ հույսի ու լավատեսության խորհուրդ: Դա 87-ի փետրվարն էր…Ուղիղ մեկ տարի անց պիտի բռնկվեր Հայոց Համազգային Շարժումը: Հայոց ազգային զարթոնքը եկավ փոխարինելու հոգեվարքի մեջ կործանվող ու հոշոտվող արցախցու ինքնագիտակցությանը: 88-ին իր գրչեղբայներ Վ. Հակոբյանի և Հ. Բեգլարյանի հետ մեկնեց Մոսկվա՝ որպես պահանջատեր պատվիրակ. «Ես, Հրաչիկը և Գաբոն դրինք մեր ստորագրությունները, հետո նամակին ծանր կնիքի պես դրվեցին մեր բռունցքները՝մեկը մյուսի վրա, որպես միաբանության և շարժման անմնացորդ նվիրվածության երդում»[2],- հայտնի դեպքերի մասին գրառում է Վ. Հակոբյանը. հետագայում ավելացան այդ բռունցքները, բազմացան՝ դառնալով համազգային զարթոնքի ու վերածննդի խորհրդանիշներ:

Փոթորկահույզ դժվար ու վտանգավոր բազմամարդ հանրահավաքներում, երբ փորձում էին ժողովրդին զսպաշապիկ հագցնել, արհամարհելով ռազմական ու քաղաքական բոլոր տեսակի ճնշումները՝ նաիր բողոքի ձայնն էր բարձրացնում ու ոգեկոչում ժողովրդին: Նրա երևալը ժողովրդի մեջ խանդավառություն էր առաջացնում, իսկ երգը հուզում հազարավոր կրակված սրտեր , գրողը դարձավ փոթորկահույզ օրերի շունչն ու ոգին, ժողովրդի խոսափողը՝ հուժկու ձայնը խառնելով ազգային վերածննդի համար մարտնչող նվիրյալների կոչերին:

Սակայն մարգարեական էր Ռաֆֆու այն պնդումը, որ թուրքը անկիրթ ու բարբարոս է , բայց քաղաքակրթվելուց հետո կդառնա կրթյալ ավազակ և այնժամ ավելի վտանգավոր կդառնա …Մեր անկախության երթը վերածվեց դժոխային ճանապարհի. բնաջնջման քաղաքականությամբ՝ արտոնյալ բարբարոսություն, կողոպուտ, բռնագաղթ, արյունոտ նախճիր, մշակութային հուշարձանների ոչնչացում… քանզի մեր ազգի բարոյական նկարագրի հակադիր բևեռում «քաղաքակիրթ « թուրքն էր, որը կրկին յաթաղանով ու նոր ցեղասպանությամբ մոլեգնեց: Բայց ինչպես Վ. Մնացականյանն է նշում, «Ցեղասպանության գերանդին քարին առավ

---

[1] ***Գաբրիելյան Գ.,*** *Ղարաբաղի հորովել, Երևան, 2003 էջ 39:*

[2] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում,*** *Ե., 2007, էջ 72:*

Արցախում և հատկապես նրա փառքի ու հերոսության բարձունք Շուշիում», որի վանքը սոսկ «քարավոր ու դարավոր» կառույց չէ երկինք կարկառված, այլ ոգեղեն սրբոց օջախ՝ ծնված ազգի տառապանքից ու « փոշոտված- հոշոտված» երազ- մուրազներից, որ դարեր ի վեր հայացքը Մասիսներին Հույսի լույս էր հայցում, իսկ Հիսուսի պատկերով խաչն առաջնորդում հաղթարշավի:

Եվ խաղաղ, մեղմաշունչ տողերին եկան փոխարինելու ոգեշունչ ապրումներն ու մարտական պոեզիան. Գ. Գաբրիելյանի ընտրած բանաստեղծական գույները ձայնեղ են: Եվ ամենացայտունն այդ գույների մեջ Հայրենասիրությունն է»[1]:

Հայոց ազգային զարթոնքը եկավ փոխարինելու հոգեվարքի մեջ կործանվող ու հոշոտվող արցախցու ինքնագիտակցությանը.

Մութ մղձավանջն էր իջել հողին մեր
Եվ խեղդում էր մեզ աջից ու ձախից…
Եվ ըմբոստացան անվախ, անվեհեր,
Փառապանծ որդիք Հայոց Արցախի…
Եվ մղձավանջը փոթորիկ դարձավ
Եվ ծլեց հույսը Արևածագի[2]:

Սա անցողիկ ու հուզական պատկեր չէ, այլ մեր անցած կենսագրական ու պատմական ուղին: Անվանի գրողը ոչ միայն արցախյան շարժման ակտիվ գործիչներից էր, այլև մեր ապագայի ազատագրական պայքարի օրհներգիչը: Մեծ հայրենասերի ոգին չի թուլանում անգամ ադրբեջանական կալանավայրում, ուր արհամարհելով թշնամուն՝ երգում էր իր իսկ գրած «Ղարաբաղի հորովելը»: Այս ամենի դեմ նա ուներ հզոր մի միջոց՝ «անսահման կենսախնդություն և անմնացորդ նվիրվածություն գրչին»,- հավաստում է գրողի այրի Նունիկ Գաբրիելյանը[3]:

Վավերափաստերի գեղագրումներ են Գաբրիելյանի «Մուսա լեռան…երկու որդին», «Ողջակիզված կյանք», «Անդրանիկ», «Աստղաշենի աստղերը» և այլ պոեմներ, որոնցում անցյալն է ներծծված ներկայի մեջ, հայ մարտիկների հաղթարշավն է ու բարոյական հաղթանակի վեհությունը, հավատի սրբագործումն ու կորուստների մատյանը, որոնցից յուրաքանչյուրը ազգային ոգին, ազգային դիմագիծը պահպանող անփոխարինելի խորհուրդ է: Եվ հյուսում է բանաստեղծը նրանց կյանքի առասպելը, ովքեր իրենց քրիստոսված մարմինները դրեցին հայրենյաց սուրբ զոհասեղանին, ասուպացան ու ձուլվեցին բազում ասուպների գիրկ

---

[1] ***Հակոբյան Վ.,*** *Սովետական Ղարաբաղ, 22 հունիս , 1977թ:*
[2] ***Գաբրիելյան Գ.,*** *Ընտրանի, ԱրՊՀ, 2007, էջ 196*
[3] ***Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում,*** *Ե., 2007, էջ 116:*

դարձած օրրան-հողին… Կասուպանան, կմարեն աստղերն ու ծիածանը, բայց չի խամրի փառքը հերոսների.

Եվ ամեն մի առավոտ ու իրիկվող օրվա հետ
Ես մոմ ու խունկ կվառեմ հիշատակին նրանց սուրբ,
Որ դու, Տե՛ր իմ, պահպանես նրանց սիրով քո հավետ…[1]

Եվ նրանց անհատական ճակատագրի գեղարվեստական պատկերը գրողը միահյուսում է ազգային համապատկերի տարերքին, քանզի բոլորն ունեին մի անուն՝ Զինվոր… Համատեղելով գրիչն ու զենքը՝ մեր բանաստեղծները հերքեցին այն թյուր կարծիքը, որ երբ զենքն է շաչում, լռում են մուսաները: Եվ հերոս նահատակ Կ. Հակոբյանի վկայակոչումով՝ «Կը-րա-կում» էին չափածո. // Տեր իմ Աստված, այս ինչ եղավ// Շփոթվել են իմ գրիչն ու ավտոմատը://

Արցախյան շարքի հանրագումարը, նրա գեղարվեստական որոնումների ընդհանրացումը կարելի է համարել «Ղարաբաղ» բանաստեղծությունը.

Ես ապրում եմ Ղարաբաղում
Եվ չեմ ապրի մեկ այլ հողում
Եվ կմեռնեմ պապերիս պես
Արցախացած նրա կողում[2]:

Դեռևս կենդանության օրոք Գ.Գաբրիելյանը կերտեց իր անմահության լեգենդը՝ արժանանալով առավելագույն պատվին ու կոչմանը՝ ժողովրդական սիրուն ու համակրանքին, ուր ներկա է գրական իր անվիճելի վեհությամբ:

Ահա գրողի նոթատետրի գրառումներից. «Եթե մի օր լսեք, որ ես մահացել եմ, չհավատաք: Կգնաք շրջեք Արցախ աշխարհով մեկ, և դուք ինձ կտեսնեք յուրաքանչյուր հայ մանկան սրտի զարկի մեջ, արցախցի գեղջուկի ցավի ու հույսի մեջ, հայ զինվորի համբերության ու հուսավառ հավատի մեջ, Արցախի երկնակմարի գույների մեջ…

Այնպես եմ հունցված խմորիդ ամեն ,
Այնպես եմ փռված ծաղկունքիդ վրա…
Ու եթե հանկարծ մի օր ինձ քամեն,
Ինձնից քո սերը պիտի ծործրա:
Ես քեզ սիրում եմ Աստծո որդու պես,
Դու ինձ մայր եղիր, իմ հայրենի հող[3]»:

---

[1] ***Գաբրիելյան Գ.,*** *Աստղաշենի աստղերը, Երևան, 1996, էջ56:*
[2] ***Գաբրիելյան Գ.,*** *Ընտրանի, 2007, ԱրՊՀ, էջ 257:*
[3] ***Գաբրիելյան Գ.,*** *Քարի փոքրն է, որ չի մեծանում, Եր., էջ 55:*

Գրականություն

1. Գաբրիելյան Գ., Ընտրանի, Ստեփանակերտ, 2007:
2. Գաբրիելյան Գ., Ղարաբաղի հորովել, Երևան, 2003:
3. Գաբրիելյան Գ., Աշնան հանդես, Երևան, 1999:
4. Գաբրիելյան Գ., Աստղաշենի աստղերը, Երևան, 1996:
5. Գաբրիելյան Գ., Քարի փոքրն է, որ չի մեծանում, Երևան, 1995:
6. Գ. Գաբրիելյանը ժամանակակիցների հուշերում, Երևան, 2007:
7. Խանյան Ս., Գ. Գաբրիելյանի աշխարհը, Երևան, 2005:
8. Հակոբյան Վ., Սովետական Ղարաբաղ, 22 հունիս , 1977թ:
9. Ջանյան Բ., Հայաստան, 1995, 9 դեկտեմբեր:
10. Սիմոնյան Հր., Լրաբեր հասարակական գիտությունների, 2001, թիվ 1:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ., Ս.Ա. Խանյանը: